«Հասանելի և մատչելի ներառական կրթություն և սոցիալական աջակցություն. խնդիրներ և հնարավորություններ»

«Chatam house» ձևաչափով փորձագիտական հանդիպման
Արդյունքների վերլուծություն

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագրի շրջանակներում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

26 ապրիլի 2019թ
Անի Պլազա հյուրանոց, ք. Երևան, Սայաթ-Նովա 19

Ներկայացումներ.

Մերոբ Խաչատրյանը ներկայացրեց «Ներառական կրթության հիմնախնդիրները» թեմայով հետազոտության արյունքները: Այս հետազոտության շրջանակներում վերլուծության էին ենթարկվել ՀՀ մարզերից չորսի՝ Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց ձորի 3-ական դպրոց: Ներկայացված արդյունքները կրում էին որակական հատկանիշներ: Հետազոտության արդյունքում ի հայտ եկան մի շարք խնդիրներ և արվեցին բացահայտումներ, այդ թվում՝ ուսուցչական և մասնագիտական կազմի վերապատրաստման հետ կապված խնդիրներ, մարդկային կապիտալի կառավարման խնդիրներ, երեխաների կրթական կարիքների գնահատման անցկացման հետ կապված տարաձայնություններ, ուսումնական ծրագրերի և առաջադիմության գնահատման համակարգի ոչ ճկուն լինելը, ԿԱՊԿՈՒ երեխաների միասնական բազայի բացակայություն, միջգերատեսչական համագործակցության անբավարարություն: Պարզ դարձավ, որ ներառական կրթությունը փոխել է դպրոցի էկոլոգիան, այն կարող է նպաստել միջդպրոցական համագործակցության ամրապնդմանը, հնարավորություն է ընձեռում գտնելու առկա խնդիրների ուրույն լուծումներ և ավելի լավ պլանավորել աշխատանքը երեխաների և ծնողների հետ: Հնչեցին նաև մի շարք առաջարկություններ՝ տնօրենների և փոխտնօրենների համար այս թեմաներով դասընթացների կազմակերպում, հատկապես ուսուցչի օգնականի, աջակցության թիմի անդամների հետ դպրոցի վարչակազմի արդյունավետ աշխատանքի կարևորումը, վերապատրաստման անցկացում տարբեր մոդուլներով՝ ներառելով ինչպես դասավանդման մոտեցումներ, այնպես էլ տարբեր կարիքներով երեխաներին աջակցելու արդյունավետ մոտեցումներ, որոնք կզուգորդվեն մենթորական աջակցության ծրագրերին, առարկայական չափորոշիչների վրա կազմվող դասագրքերի նյութերի բազմազանեցում, գնահատման առաջադրանքների՝ առավել ներառականություն ապահովելու համար, առաջադիմության գնահատման չափանիշների հստակեցում՝ դրանք դարձնելով ավելի ճկուն երեխայի կարիքների գնահատման համակարգի շարունակաբար բարելավում՝ այն դարձնելով ավելի թափանցիկ, հաշվի առնել երեխայի հետ երկարաժամկետ աշխատող մասնագետների տեսակետները:

Անահիտ Նահապետյանը ներկայացրեց «Սոցիալական աջակցության համայնքային ծառայությունները» հետազոտության արդյունքները, որի շրջանակում անցկացվել էր հարցում համայնքային աջակցության քսաներկու կազմակերպության շրջանում և քարտեզագրման փորձ էր արվել: Նշվեց մի շարք խնդիրների առկայությունը, այդ թվում՝ դոնորների և ժամանակավոր բնույթ կրող ֆինանսավորման խնդիրը, մասնգետների վերապատրաստման, փորձի ուսումնասիրության, ոչ որակյալ տնային ուսուցման (առանց հատուկ կարիքները հաշվի առնելու) և այլ խնդիրներ:

Նաիրա Առաքելյանը՝ «Արմավիրի զարգացման կենտրոնի» նախագահը, ամփոփեց կատարված հետազոտությունների արդյունքները:

Քննարկումներ և առաջարկություններ.

Բացահայտված խնդիրների շուրջ ծավալված քննարկումների արյունքում հնչեցին մի շարք առաջարկներ՝

- Երեք նախարարությունների՝ առողջապահության, կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի հետ միասին, ինչպես նաև ՄԱԿ-ի աջակցությամբ ներառական կրթության ոլորտում չափորոշիչներ և ստանդարտներ ստեղծումը (այս գործընթացն արդեն սկսվել է);
- Կատարելագործել ԿԱՊԿՈՒ անձանց վերաբերյալ տեղեկությունների գործող միասնական բազան;
- Ստեղծել մի մեխանիզմ, որը հնարավորություն կտա հաշմանդամություն ունեցող երեխաների վաղ հայտնաբերումը՝ հետագայում աջակցություն կազմակերպելու նպատակով;
- ՈՒսուցիչների և մասնագետների համար նախատեսված վերապատրաստումները դարձնել առավել թիրախային;
- Ուժեղացնել ծնողների դերը այս համակարգի վերահսկողության կազմակերպման գործում՝ դարձնելով վերջիններիս պահանջատեր: Այդ նպատակով կազմակերպել սեմինարներ, բարձրացնելով իրազեկվացությունը նրանց շրջանում;
- Աջակցության տրամադրման պլանների, նախագծերի ստեղծում;
- Վերանայել և ներդնել անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) լրացման նոր մշակույթ;
- Ուսուցիչների աշխատանքի հանդեպ վերաբերմունքի մշակույթի փոփոխություն (շատերը աշխատանքային ժամերն ավարտվելուն պես շտապում են հեռանալ, ինչի արդյունքում չեն լրացվում որոշ խաստաթղթեր, նրանք կարծում են, որ իրենց աշխատանքային պարտականությունների մեջ է մտնում միայն դասավանդումը);
- Շատ հաճախ ԱՈՒՊ-ների էջերը միտումնավոր կեղծվում են, քանի որ կեղծվում են նաև այլ փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են այս կամ այն օրգանի, կազմակերպության կողմից ֆինանսական և նյութական օգնություն ստանալու համար: Այդ պատճառով շրջանառությունից ընդհանրապես հանել ԱՈՒՊ-ները;
- Հետևողականություն ցուցաբերել տնային պայմաններում ուսուցման ծառայություններ տրամադրելու և խնամքի պրակտիկային, որը հաճախ չի համընկնում ԿԱՊԿՈՒ երեխաների անհատական կարիքների հետ;
- Տեղեկությունների անհամապատասխանության, հին լինելու պատճառով, տեղեկությունների նախկին բազայի փոխարեն ստեղծել նորը;
- Բոլոր մասնագիտական վերապատրաստումները կազմակերպել միասնական չափորոշիչներին համապատասխան;
- Անցլացնել հետազոտություն պարզելու համար, արդյոք նախկին մոդելը ուր է հասցրել ԿԱՊԿՈՒ երեխաներին այսօր;
- Ստեղծել մի նախագիծ, որը կշարունակի աջակցություն տրամադրել չափահասությանը հասած և հաշմանդամություն, հատուկ խնամք պահանջող անձանց;
- Իրազեկման արշավներ կազմակերպել և աշխատել նաև ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ;

- Ժամանակ առ ժամանակ անցկացնել երեխաների վիճակի վերագնահատում՝ պարզելու համար, արդյոք նրանք դեռ կարիք ունեն այդպիսի ուսուցում ստանալ, թե ոչ;
- Հաղորդակցական կապ հաստատել այս խնդիրներին առնչվող տարբեր օղակների՝ ծնողների, ուսուցիչների, տարբեր կազմակերպությունների և պետական մարմինների միջև՝ ձեռնարկվող քայլերի միասնականությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով;
- Ստեղծել ուսուցիչների վարձատրման նոր կարգ, որը կբարձրացնի վերջիններիս մոտիվացիան;
- Լուծում գտնել ուսուցչի օգնականների հետ կապված խնդիրներին, նրանց վարձատրման (դրույքի 0.8 չափով), ուսուցիչների հետ կոնֆլիկտների և մոտիվացման հարցերին: